ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայիսի 5-ին, Կարմիր կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը։ Քարոզի բնաբանն էր «Ցարեաւ Տէրն ի մեռելոց հզօր զօրութեամբ, հաստատեաց զհիմունս եկեղեցւոյ սրբոյ»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Մայիսի 9-ին, հինգշաբթի, Բաքու մեկնեց հոգեշնորհ Տ. Արսեն աբեղա Թերբերյանը, ամսի 12-ի կիրակի օրը Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում պատարագելու և բանին կենաց քարոզությամբ մխիթարելու հավատացյալներին։

Տ. Արսեն աբեղան Մայր Աթոռ վերադարձավ ամսի 14-ին։

* * *

Մայիսի 12-ին, կիրակի, Երևումն Ս. Խաչի։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողապալյանը «Այսօր ընդ ամպս լուսաւորս երևեալ նշան տէրունական խաչին» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Մայիսի 17-ին, ուրբաթ, Թբիլիսի մեկնեց հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողապալյանը, ամսի 19-ի կիրակի օրը պատարագելու և քարոզելու Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ եկեղեցում։

* * *

Մայիսի 19-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Արսեն աբեղա Թերբերյանը «Ես եմ դուռն, ընդ իս եթէ ոք մտանիցէ կեցցէ յաւիտեան» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Մայիսի 23-ին, հինգշաբթի, Համբարձումն Քրիստոսի։ Օրվա մեծ տոնի առիթով Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Նարեկ աբեղա Շաքարյանը։ Քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը «Համբարձաւ Տէրն մեր յերկինս» բնաբանով։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց մաղթանք՝ Հայրապետական Աթոռի Սսից էչմիածին փոխադրության տարեդարձի առթիվ։

* * *

Մայիսի 23-ին, հինգշաբթի, երեկոյան ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ Հոգևոր Ճեմարանի ուսանողության մարզահանդեսը սեփական մարզադաշտում։

Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը, «Նարիրի» և «Արագած» խմբերի բաժանված, կատարեց մարմնակրթանքի զանազան ձևերի վարժություններ, մասնակցեց վոլեյբոլի և բասկետբոլի մրցումներին և զվարճալի խաղերին։

Մրցումներում առաջին տեղը գրավեց «Արագած» խումբը, որը և նվաճեց մրցության

բաժակը։ Վոլեյբոլի բաժակը շահեց «Արագած»-ը, իսկ բասկետ-բոլինը՝ «Նաիրի»-ն։

Հանդիսությունը վերջացավ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և «Պահպանիչ»-ով։

* *
*

Մայիսի 26-ին, կիրակի, Երկրորդ Մաղկազարդ։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։ Քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողապալյանը «Որ ի լրումն բոլորից տնօրինական մեծ խորհրդոյն, առեցեալովն առ ի մէջ՝ փառօք առ Հայր վերհամբարձաւ» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Սուրբ պատարագին ներկա էին նաև ռումինահայ ուխտավորներ։

* *
*

Մայիսի 27-ին, հինգշաբթի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ և աղոթքով, սկսվեցին 1962—1963 ուսումնական տարվա ամավերջի քննությունները Հոգևոր Ճեմարանում։ Քննությունները կտևեն մինչև հունիսի 9-ը։